ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/15

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Նիկողոսյանի, Ա. Գրիգորյանի, Ա. Պարանյանի և Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցում, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.01.2020թ.-ի թիվ 26/26-1/827-2020 գրությամբ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 22.01.2020թ.-ի թիվ 3/27/1895-20 գրության հիման վրա, 24.01.2020թ.-ին «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 24.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 03.02.2020թ.-ին ու 11.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը 22.01.2020թ.-ի թիվ 3/27/1895-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Ձեզ է ուղարկվում ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28 ծածկագրով գնման ընթացակարգի և ընթացակարգին հայտ ներկայացրած Գարանտսերվիս ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, քանի որ Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից ՀՀ Ո ԳՀԾ9Բ-ՏՍԿ- ՊՊԳՎ-2020/Ա-28 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում խախտվել է հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է մասնակցիների կողմից գնային առաջարկի արհեստականորեն նվազեցմանը և խախտվել է բանակցությունների բնականոն ընթացքը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի կողմից 13.02.2020թ.-ին Բողոքներ քննող անձին ներկայացվել է դիրքորոշում, որով վերջինս հայտնել է հետևյալը.

«Ոստիկանության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.12.2019թ.-ին հրապարակվել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28 ծածկագրով հրատապ բաց մրցույթ /այսուհետ՝ ընթացակարգ/: Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 10.01.2020թ.-ին, այլ ոչ թե 15.01.2020 թվականին, ինչպես նշեց Գարանտսերվիս ՍՊԸ-ի շահերի պաշտպանը նիստի ժամանակ:

Ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված հրավերի օրինակելի ձևի վերջին փոփոխություններով, որն իրենից ենթադրում է այսպես ասած "միափող" մրցույթ, այսինքն, մասնակցի որակավորումը գնատահվում է հայտերի բացման նիստի ժամանակ: Այսպիսով ոչ գնային պայմաններով բավարար գնահատված մասնակիցները հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների /հիմք Ընթացակարգի հրավերի 8.7 կետի Բ ենթակետ/: Բանակցությունների ժամանակ ներկա բոլոր մասնակիցները տեղեկացվել են, որ հրավերի 5.1 կետի և գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, այսինքն՝ բանակցությունների ժամանակ գնային առաջարկի նվազեցումներն իրականացվելու են առավելագույնը մինչև հայտով ներկայացված ինքնարժեք: Սակայն Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկները նվազեցվել են հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից ցածր: Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ պարբերության պահանջների համաձայն յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակող բառերի և տառերի արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն մասնակիցը գնային

առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Քանի որ Ընթացակարգի հրավերի օրինակելի ձևով գնային առաջարկը պահանջվում է ներկայացնել ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, ուստի այս պարագայում մասնակցի կողմից ներկայացված հայտով բացահայտվում է գնման առարկայի ինքնարժեքը: Պատվիրատուն որպես հիմք ընդունում է մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի հաշվարկը, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը թույլ չի տալիս մասնակցից պահանջել այլ փաստաթղթեր, որոնցով կներկայացվի ինքնարժեքի հաշվարկը: Ուստի որպես գնման առարկայի ինքնարժեք ընդունվում է հայտով ներկայացված գինը: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու միայն մեկ հայտ, որն իր մեջ բացի մյուս պահանջվող փաստաթղթերից ներառում է թվով մեկ գնային առաջարկ: Իսկ ինքնարժեք փոխելուց փոխվում է նաև տվյալ մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկը, փաստացի ստացվում է որ մասնակիցը հայտով երկու գնային առաջարկ է ներկայացնում:

Գարանտսերվիս ՍՊԸ-ն բանակցությունների ժամանակ տեսնելով, որ էլ հնարավորություն չունի շահույթից նվազեցում կատարելու, սկսել է գնային առաջարկը նվազեցնել ինքնարժեքից: Այսպիսով մասնակիցը դեմպինգի ենթարկելով գնման առարկայի գինը և խախտելով ՏՄՊՊՀ օրենսդրության պահանջները, որով արգելվում է դեմպինգ իրականացնել, իր գնային առաջարկը նվազեցրել է ինքնարժեքից:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված 21.01.2020թ.-ին և 05.02.2020թ-ին հարցումները /կցվում են, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված բանավոր հարցման արդյունքում հստակ պարզաբանումն այս հարցի վերաբերյալ ևս մեկ անգամ հստակեցնում է այն փաստը, որ գնային առաջարկի նվազեցումներ կատարվում են միայն շահույթից:

Բացի դա 03.02.2020 թվականին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/01 որոշմամբ ևս հաստատվեց այն փաստը, որ գնային առաջարկի նվազեցումներ կատարվում են մինչև հայտով ներկայացված ինքնարժեքը:

Ինչ վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, այն է օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, միշտ չէ, որ ցածր գինը գրավական է արյդունավետության և օգտավետության: Ասեմ ավելին, որքան ցածր է մասնակցի գնային առաջարկը, նույն համարժեքությամբ նրա կողմից մատուցվող ծառայությունները դառնում

են անորակ, ինչի հետևանքով վատնվում են շատ ավելի շատ միջոցներ, քան միջին գնային առաջարկի պարագայում:

ՀՀ ոստիկանությունը գտնում է, որ Գարանտսերվիս ՍՊԸ-ի հայտի մերժումը իրավաչափ է և տվյալ ընթացակարգի շրջանակներում պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները:»:

3. <u>«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 31.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.01.2020թ.-ի թիվ 26/26-1/827-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 11.02.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գարանտսերվիս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով թիվ ՍՑ-ԼՕ-2020/15 ընթացակարգը նախաձեռնվել է այն հիմքով, որ իբրև թե ՍՊԸ-ն գնման ընթացակարգի շրջանակում խախտել է հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից գնային առաջարկի արհեստականորեն նվազեցմանը և խախտվել է բանակցությունների բնականոն ընթացքը /տես՝ ՀՀ ոստիկանության գրությունն՝ ուղղված ՀՀ ՖՆ տեղակալ Կ. Բրուտյանին/:

Փաստացիորեն նշված իրավիճակը ՀՀ ոստիկանության կողմից դիտարկվել է որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմք (գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում), և ՀՀ ոստիկանությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի տվյալները ներկայացրել է լիազոր մարմնին՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Գտնում ենք, որ ՀՀ ոստիկանության գործողությունները իրավաչափ չեն հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես հայտնի է, ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 10.01.2020թ.:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև "Գարանտսերվիս" ՍՊԸ-ն:

Ընթացակարգով ներկայացրած հայտով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/		Շահույթ /տառերով և թվերով/		ԱԱՀ** /տառերով և թվերով/		Ընդհանուր գինը /տառերով և թվերով/	
2	*3*		*4*		*5*		*6=3+4+5*	
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	Երեք միլիոն երկու հարյուր երկու հազար վեց հարյուր հիսուներկու	3,202,652	Երեք հարյուր քսան հազար երկու հարյուր վաթսունհինգ	320,265	Յոթ հարյուր չորս հազար հինգ հարյուր ութսուներեք	704,583	Չորս միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար հնգհ հարյուր	4,227,500
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	Երեք միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր յոթանասուն	3,199,470	Երեք հարյուր տասնինը հազար ինը հարյուր քառասունյոթ	319,947	Յոթ հարյուր երեք հազար ութ հարյուր ութսուներեք	703,883	Չորս միլիոն երկու հարյուր քսաներեք հազար երեք հարյուր	4,223,300
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	Երկու միլիոն ութ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր քառսունմեկ	2,822,841	Երկու հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր ութսունչորս	282,284	Վեց հարյուր քսանմեկ հազար քսանհինգ	621,025	Երեք միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար մեկ հարյուր հիսուն	3,726,150
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	Երեք միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր հիսունվեց	3,511,856	Երեք հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր ութսունվեց	351,186	Յոթ հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր ութ	772,608	Չորս միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր հիսուն	4,635,650

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 10.01.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով Ընթացակարգի հրավերի 8.7. կետի «բ» ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների՝ 14.01.2020թ.:

Բանակցությունների ընթացքում «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ նվազեցրած գնային առաջարկը (կցվում է).

Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
2	3	6=3+4+5
Ավտոմե քենաների վերանորոգման ծառայություններ	2,872,727	3,792,000
Ավտոմե քենաների վերանորոգման ծառայություններ	2,509,091	3,312,000
Ավտոմե քենաների վերանորոգման ծառայություններ	2,336,364	3,084,000
Ավտոմե քենաների վերանորոգման ծառայություններ	3,054,545	4,032,000

Իսկ արդեն 16.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի առաջին պարբերության համաձայն՝ 27.12.2019թ. ժամը 10:30 ին <<Ֆլեշ մոտորս>> ՍՊԸ-ն հրավիրվել է միաժամանակյա բանակցությունների...:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝

1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել "ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՓ" ՓԲԸ-ին:

2-4 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել "Ֆլեշ մոտորս" ՍՊԸ-ին:

Գտնում ենք, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և առկա չեն վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար օրենսդրորեն ամրագրված հիմքերը երկու առումով.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված

փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին խնդրում ենք նկատի ունենալ, մեր տեսակետից, տարօրինակ մի հանգամանք. «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների փուլում ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ներկայացնելը ՀՀ ոստիկանության կողմից դիտարկվել է որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և ՍՊԸ-ի տվյալները, Կարգի 45-րդ կետի համաձայն, ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախախարություն՝ պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար:

Այսինքն՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, թե իբր՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի շրջանակում խախտել է հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից գնային առաջարկի արհեստականորեն նվազեցմանը և խախտվել է բանակցությունների բնականոն ընթացքը /տես՝ ՀՀ ոստիկանության գրությունը ուղղված ՀՀ ՖՆ տեղակալ Կ. Բրուտյանին/:

Նշված իրավիճակը, այսինքն փուլում ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ներկայացնելը, ՀՀ ոստիկանության կողմից դիտարկվել է որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

Մինչդեռ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը սպառիչ թվարկում է, թե ինչպիսի խախտումներ պետք է դիտարկվեն որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և ակնհայտ է, որ ինքնարժեքից ավելի ցածր գնային

առաջարկը, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով, չի կարող դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում: Հաշվի առնելով, որ վերոհիշյալ իրավիճակը չէր կարող տեղավորվել Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված «ստանձնած պարտավորության խախտում» եզրույթի մեջ, այսինքն առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը: Համապատասխանաբար, եթե առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը, ապա կիրառելի չէ նաև Կարգի 45-րդ կետի իրավակարգավորումը, և ՀՀ ոստիկանությունը «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի տվյալները ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրել է ոչ իրավաչափ:

Վերոհիշյալի արդյունքում ՀՀ ոստիկանությունը փաստորեն, մեր կարծիքով ոչ իրավաչափ, ոչ միայն մերժել է «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը՝ նախապատվությունը տալով ավելի բարձ գնային առաջարկ ներկայացրած մասնակցին, այլ նաև «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին ոչ իրավաչափորեն կանգնեցրել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:

2. Գտնում ենք նաև, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելը, ինքնին, ոչ իրավաչափ է, և համապատասխանաբար, եթե ինքնարժեքից ցածր գնային առաջարկ ներկայացնելը չդիտարկվեր որպես հայտը մերժելու հիմք, չէր առաջանա «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգ, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի.

- հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում՝ դրա փոխարժեքը.

- նշում է այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Եվ այսպես՝ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Հրավերի 5.2. կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հրավերի 5.3. կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հրավերի 8.1. կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Հրավերի 8.4. կետի համաձայն՝ ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հրավերի 8.7 կետի «դ» պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Բանակցությունների ընթացքում «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացրած ինքնարժեքից ցածր գնային առաջարկով: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 5.1. կետի պահանջները (առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից) և հաշվի առնելով, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից, իբրև թե խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և տվյալ գնման ընթացակարգի հրավերի պահանջը, որոշում է կայացվել մերժել վերջինիս հայտը:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է Հրավերի 5.1 կետի հիման վրա, որի համաձայն. «Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով»: Փաստորեն ըստ գնահատող հանձնաժողովի, քանի որ գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացրած ինքնարժեքից ցածր գնային առաջարկով, դրանով իսկ խախտվել է Ընթացակարգի հրավերի 5.1. կետի պահանջները: Գտնում ենք, որ նշված հիմնավորումը իրավաչափ չէ մի քանի հանգամանքներով պայմանավորված.

Նախ, Հրավերի 5.1. կետի, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածի պահանջները պետք է մեկնաբանվեն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, որը հստակ սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից և ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից: Մինչդեռ Հրավերի 5.1. կետը, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածը հստակ ամրագրում են, որ այստեղ խոսքը գնում է հայտով ներկայացրած գնային առաջարկի մասին: Ուստի վերոհիշյալ նորմերը չեն կարող վերաբերել բանակցությունների ընթացքում գների նվազեցման հարաբերությունների կարգավորմանը, առավել ևս հիմք հանդիսանալ հայտը մերժելու համար: Չէ որ Օրենքի 34-րդ հոդվածը հստակ ամրագրում է, որ հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, եթե հակասում են հրավերի պահանջներին: Իսկ տվյալ դեպքում հրավերի 5.1. կետը ամրարգրում է հայտով ներկայացվող գնային առաջարկին ներկայացվող պահանջներ, ինչի, բնականաբար, հիմք չի կարող հանդիսանալ գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների փուլում մասնակցի դրսևորված վարքագծի արդյունքում մասնակցությունը դադարեցնելու համար:

Հրավերի 5.1 կետի շարադասությունը: Մասնավորապես, 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Եթե ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներով, փորձենք այս նորմը տառացի

մեկնաբանել, ապա կստացվի հետևյալը. «Առաջարկվող գինը պետք է պակաս չլինի փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերի ինքնարժեքից»:

Հրավերի 8.7 կետը մանրակրկիտ կարգավորում է բանակցությունների ընթացքը: Մասնավորապես այս կետի «դ» պարբերությունը (այդ թվում նաև նույնաբովանդակ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ» պարբերությունը) ամրագրում է հետևյալը. «մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը»: Ինչպես հայտնի է, գնումների մասին ՀՀ օրենսդրությունը հստակ ամրագրում է, որ գնային առաջարկը մեկ միասնական փաստաթուղթ է, որը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ավելին, եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Վերոհիշյալը հստակ ապացուցում է, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը ամբողջությամբ՝ ներառյալ ինքնարժեքը, քանի որ հրավերը և գնումների մասին ՀՀ օրենսդրությունը այս մասով այլ բան չեն նախատեսում, ավելին, ուղղակիորեն թույլատրում են մասնակցին վերանայել իր ամբողջ գնային առաջարկը:

Օրենքի 28-րդ հոդվածի կարգավորումը բանակցությունների փուլի վրա տարածելիս՝ պետք է նույնպես կիրառել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները հետևյալ մասով. նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքները: Ինչպես հայտնի է, Օրենքի 3-րդ հոդվածը հստակ ամրագրում է գնումների գործընթացի սկզբունքները: Ըստ այդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Մինչդեռ եթե բանակցությունների ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվում, որպեսզի մասնակիցը հայտով իր ներկայացրած ինքնարժեքից ավելի ցածր ինքնարժեք ներկայացնի, ավելին, անհասկանալիորեն այդ հիմքով հայտը մերժում է, ապա պետությունը կզրկվի գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման հնարավորությունից:

Տեսականորեն հնարավոր է, որ հայտը ներկայացնելու փուլում մասնակիցը հնարավոր է բանակցելով մեկ մատակարարի հետ և ճշտելով գները, ներկայացնի գնային առաջարկ՝ համապատասխան ինքնարժեքով, իսկ բանակցություններից առաջ կապ հաստատելով մեկ այլ մատակարարի հետ՝ ստանա ավելի ցածր ինքնարժեք: Ուստի նաև այս հիմնավորմամբ տրամաբանական է, որ մասնակիցը պետք է ունենա հնարավորություն բանակցությունների փուլում ներկայացնելու հայտով ներկայացրած գնային առաջարկի ինքնարժեքից ավելի ցածր գնային առաջարկ, ինչը թե՛ հրավերը և թե՛ գնումների մասին ՀՀ օրենդրությունը բանակցությունների փուլում չեն արգելում:

Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնահատող հանձնաժողովը 16.01.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի առաջին պարբերությամբ թյուրիմացաբար նշել է, որ 27.12.2019թ. ժամը 10:30-ին Ֆլեշ մոտորս ՍՊԸ-ն հավիրվել է միաժամանակյա բանակցությունների: Սակայն միաժամանակյա բանակցությունները տեղի են ունեցել ոչ թե 27.12.2019թ., այլ 14.01.2019թ., իսկ բանակցությունների հրավիրվել են երեք մասնակից, այլ ոչ թե միայն Ֆլեշ մոտորս ՍՊԸ-ն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնահատող հանձնաժողովը սխալ է կիրառել Օրենքի 28-րդ հոդվածը և հրավերի 5.1. կետը, ինչը հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև 34-րդ հոդվածի պահանջների խախտմանը, ինչը խոչընդոտ է հանդիսացել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման համար:

Բացի այդ, գտնում ենք, որ ՀՀ ոստիկանությունը խախտել է Կարգի 45-րդ կետի պահանջները և ոչ իրավաչափորեն նախաձեռնել ընթացակարգ՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/15 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն:

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	3 202 652	320 265	704 583	4 227 500
2	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	3 199 470	319 947	703 883	4 223 300
3	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	2 822 841	282 284	621 025	3 726 150
4	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	3 511 856	351 186	772 608	4 635 650

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.7 կետի «բ» ենթակետը, Հանձնաժողովը որոշել է բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Հանձնաժողովի 16.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունները սկսվելուց առաջ ներկա մասնակիցներին ծանուցվել է, որ գնային առաջարկի նվազեցումները՝ հրավերի 5.1 կետի պահանջների համաձայն իրականացվելու են առավելագույնը մինչև ինքնարժեք նվազեցում, այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող վերջնական գինն առանց ԱԱՀ պետք է պակաս չլինի իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրության այս դրույթն անընդունելի էր և վերջինս իր կողմից գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով ներկայացված ինքնարժեքից ցածր գնային առաջարկով: Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 5.1 կետի պահանջները և հաշվի առնելով այն, որ Մասնակցի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և տվյալ գնման ընթացակարգի հրավերի պահանջը, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել վերջինիս հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.01.2020թ.-ի թիվ 26/26-1/827-2020 գրությամբ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և

ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, հայտնելով որ ուսումնասիրել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՏՍԿ-ՊՊԳՎ-2020/Ա-28» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ առաջարկելով պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	3 202 652	320 265	704 583	4 227 500
2	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	3 199 470	319 947	703 883	4 223 300
3	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	2 822 841	282 284	621 025	3 726 150
4	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	3 511 856	351 186	772 608	4 635 650

Հանձնաժողովի 10.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.7 կետի «բ» ենթակետը, Հանձնաժողովը որոշել է բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Հանձնաժողովի 16.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, բանակցությունները սկսելուց առաջ ներկա մասնակիցներին ծանուցել է, որ գնային առաջարկի նվազեցումները՝ հրավերի 5.1 կետի պահանջների համաձայն իրականացվելու են առավելագույնը մինչև ինքնարժեք նվազեցում, այսինքն՝ մասնակցի կողմից առաջարկվող վերջնական գինն առանց ԱԱՀ պետք է պակաս չլինի իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրության այս դրույթն անընդունելի էր և վերջինս իր կողմից գնային առաջարկի նվազեցումն իրականացրել է հայտով

ներկայացված ինքնարժեքից ցածր գնային առաջարկով: Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 5.1 կետի պահանջները և հաշվի առնելով այն, որ Մասնակցի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության և տվյալ գնման ընթացակարգի հրավերի պահանջը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել վերջինիս հայտը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն սույն գործում առկա չեն, քանի որ Մասնակիցը որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետ), հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետ):

Անդրադառնալով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիման վրա գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցման հիմքին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով հստակ և սպառիչ սահմանվել են գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների ցանկը, դրանք են՝ մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որպես իրականությանը չհամապատասխանող որակելը, մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը որակավորման ապահովումը չներկայացնելը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.01.2020թ.-ի թիվ 26/26-1/827-2020 գրությամբ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/15 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ